Գ. ՏԱՐԻ Թիւ 607 — ՇԱԲԱԹ 11 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 (Ն. Տ.) 23 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 — 17 ԲԷՄԻ ԻՒԼ ԱԽԸՐ 1303

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԻՆԻ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

es annonces sont reçues à l'EASTERN AGENCY
Karakeuy, Déirmén han

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ԻՍԹԸՐՆ ԷՃԷՆՍԻ

Կ. ՊՈԼԻՍ

ՈՒՐԲԱԹ, 10 ՅՈՒՆՈՒԱՐ, 1886

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԻԶՄԻՐԻ ՊԵԶՃԵԱՆՔ

Մեր հինգշաբթի աւուր թուով հրատարակեցինք նամակի մը պատճէնը, զոր Վսեմ. Յովհաննէս էֆէնտի Սպարդալեան, Իզմիրցի մեծահարուստ և բարեգործ ազգայինն, ուղղած է առ Ս. Առաջնորդն, ինչպէս նաև Տ. Մելքիսեդեկ Օրբազանին պատասխանագրոյն օրինակն։ Որպէս արդէն ծանուցուած էր մեր Իզմիրի թղթակցութեանց մէջ, Ն. Վսեմութիւն կ'իմացնէ թէ իւր հանգուցեալ եղբայր և ինք երկար ժամանակէ հետէ կը փափաքէին վերաշինել Իզմիրի Ս. Մեսրոպեան ազգային վարժարանն, որ շատոնց հինցած շէնք մ'է. թէ ինք զայս մտադրութիւն իրագործելու ժամանակն հասած կը համարի, և թէ հետեւապէս կը հաղորդէ նոր կառուցանելի վարժարանին յատակագիծը զոր պատրաստել տուած է, և կ'ուզէ իմանալ թէ Իզմիրի ազգային իշխանութիւնք դիտողութիւն մ'ունի՞ն։ Երեք շաբաթ յետոյ, Ս. Առաջնորդը կը ղրկէ արժանավայել պատասխան մը, որ հաւասարապէս պատուաբեր է թէ՛ առաքողին և թէ՛ ստացողին, արձագանգ տալով ընդհանուր բերկրութեան զոր Սպարդալեան Գերդաստանի պետին զեկուցումը պատճառած է թէ՛ ազգային իշխանութեանց և թէ՛ ամեն լսողաց, և ծանուցանելով վարչային մարմնոց ինչ ինչ կարգադրութիւններն, որք մեծանուն բարերարին նկատմամբ հանրային երախտագիտութեան զգացումն արտայայտելու յարմարագոյն միջոց համարուած են։ Ըստ մեր մասնաւոր տեղեկութեանց, Ս. Մեսրոպեան վարժարանի վերաշինութիւնն, եթէ Վսեմ. Յովհաննէս էֆէնտի տաքէն նոր բան չաւելցնէ իւր որոշած յատակաձեւոյն վրայ, 5էն մինչեւ 6,000 ոսկւոյ գործ մը պիտի լինի։

Թէեւ Սպարդալեան Վսեմ. Յովհաննէս էֆէնտիի այս նոր բարեգործութեան արդիւնքն Իզմիրի Հայք միայն պիտի վայելեն, բայց ուրիշ քաղաքաց և ուրիշ երկրաց Հայք նուազ բերկրութիւն չպիտի զգան, իմանալով նոր ողհողութիւնը զոր հայ մեծատուն մը կ'ընէ ի սէր ազգային յառաջդիմութեան։ Հայք, ուր որ ալ բնակին, համերաշխ են, կամ պարտին լինել, ազգային յառաջդիմութեան գործոյն մէջ։ Այդ համերաշխութեամբ, Կ. Պոլսոյ Հայք միշտ Իզմիրի Հայոց չափ յարգած են Սպարդալեան անունն։ Սպարդալեան երկոքին եղբարք քրին Իզմիրի մէջ ինչ որ՝ Պեզճեան Ամիրայէն ի վեր՝ ո՛չ մէկ հայ մեծատուն ըրած է Կ. Պոլսոյ մէջ, թէպէտ Սպարդալեանց չափ և աւելի եւս հարուստ Հայեր պակաս չեն եղած և այժմ ալ պակաս չեն ի Կ. Պոլիս։ Սպարդալեան անուան զուգապատիւ անուն մը եթէ փնտռենք զարդիս, Ռուսահայոց մէջ միայն կրնանք գտնել զայն, — Սանասարեան անունը։ Պեզճեան ծանօթ է բովանդակ Հայութեան, որ երախտագիտութեամբ պիտի յիշէ միշտ զայն անզուգական բարերար։ Սանասարեան հաւասարապէս ծանօթ է Ռուսահայոց, ոյց կը վերաբերի, և Թուրքիոյ Հայոց, որոց մէջ կանգնած է իւր մեծագործութեան մէկ հոյակապ յիշատակարը, Կարնոյ վարժարանն։ Այս փառաւոր անուանց կարգին մէջ ի վաղուց մտած էր նաեւ Սպարդալեան Գերդաստանն, և Իզմիրէն եկած նոր և բերկրաբեր լուրը վերջնական դրոշմը պիտի տայ համաշխարհիկ համբաւոյն զոր Վսեմ. Յովհաննէս էֆէնտի և իւր Գերդաստան կատարեալ իրաւամբ ստացած են հայ ժողովրդեան մէջ։

Կ'արժէ որ այսպիսի բարեսէր և բարերար հայ մը փոքր ինչ աւելի կենսագրական տեղեկութեամբք ծանօթացնենք հեռաբնակ Հայերու։ Յովհաննէս էֆէնտի Սպարդալեան ծնած է 1831 յունուար 10ին։ Հայրը գաղթած էր Սպարդայէն, և Իզմիրի մէջ հաստատուած էր։ Մարդ մ'էր Եսայի Սպարդալեան անուամբ։ Եսայի ունեցաւ երկու մանչ զաւակ, Յակոբ և Յովհաննէս, և մէկ աղջիկ, այժմ Տիկին Սարգիս Սէֆէրեան։ Եսայի հազիւ կրնար հոգալ իւր ընտանեաց ապրուստը. բայց երբ իւր երկու տղայք մեծցան, յաջողեցան հաստատել մանիֆատուրայի խանութ մը, և աշխատասիրութեամբ, խնայողութեամբ և ուշիմութեամբ ա՛յնչափ յառաջացան որ Իզմիրի հրապարակին սկըսաւ նեղ գալ իրենց։ 1855ին Յովհաննէս էֆէնտի առաջին անգամ գնաց Մանչէսդըր, ուր մնաց մէկ քառորդ դար շարունակ։ Սպարդալեան Գերդաստանին հարստութիւնն այն թուականէ կը սկսի։ Պարագայք անշուշտ նպաստեցին. բայց Իզմիրի հրապարակին վըրայ ամեն ոք կը խոստովանի թէ Յովհաննէս էֆէնտիին մանիֆատուրայի մասին հմտութիւնը, ճաշակն և իբրեւ գործնական մարդ մեծ փորձառութիւնն աւաւելապէս նպաստած են այն եզական յաջողութեան որով պսակեցան իրենց ճգունք։ Յովհաննէս էֆէնտի կը գրէ հայերէն, և կը խօսի անգլիերէն, տաճկերէն և յունարէն։ Ըստ ընդհանուր վկայութեան, շատ բարեպաշտ, ողորմասէր և աղքատասէր է. բնութեամբ խոնարհ և ճշմարտապէս ազգասէր։ Իզմիրի և Կ. Պոլսոյ ամեն կարեւոր հանգանակութեանց մէջ ունի միշտ երեւելի բաժին մը. սեղ նիւթապէս քաջալերած է գրագէտներ. կ'ընդունի և կը կարդայ ամեն հայ թերթ։

...դիրք», որով ցարդ տարուբերեցաւ մեր Կեդրոնական Վարժարանի բացման գործն, և Կ. Պոլսոյ Հայք ղուրկ մընացին այնչափ էական, այնչափ տարրական հաստատութենէ մը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔՍՈՒՄՆ ԲՈՂՈՆԱՑՒՈՑ Ի ԲՐՈՒՍԻՈՅ

#### ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ ԺՈՂՈՎՈՅՆ ՄԷՋ

Յունուար 15ին, Գերմանիոյ Երեսփոխանաց ժողովն իւր բոլոր նիստը նուիրեց այն Բողոնացւոց խնդրոյն, որք վերջերս հազարներով արտաքսեցան Բրուսիոյ արեւելեան գաւառներէն, մանաւանդ Բոզէնէ։ Ընթերցողք կը յիշեն թէ ամիս մը յառաջ նոյն խընդրոյ...

---

—)( 16 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

## ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Դ.

ԾԱԾԿԱԳԻՐ ՊԻՏԱԿԸ

Նոյն երեկոյին, ժամ ութին միջոցները, Թրիէստի ոստիկանութիւնն յանկարծ կոխեց Լատիսլաս Զաթմարի տունն։ Որ և է ընդդիմութիւն անհնարին էր։ Ուստի, Սանտորֆ կոմս, Զաթմար կոմս, Ստեփան Պաթօրի, նոյն ինքն Սարքանի, որ բնաւ հերողբեց, և Պորիք ձերբակալուելով բանտարկեցան, առանց բնաւ իմացուելու։

Ե.

ԴԱՏԱՍՏԱՆԷՆ ԱՌԱՋ, ՄԻՋՈՑԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ

Խորհիս, զոր 1815ի դաշնադրութիւնք աւստրօ-հունգարական թագաւորութեան...

հետ միացուցին, եռանկիւն թերակղզի մ'է որ Թրիէստի ծոցէն մինչեւ Քուարներոյի ծոցը կը տարածի, որոյ եզերքը բազմաթիւ նաւահանգիստք կան։ Ասոնց մէջ, և գրեթէ թերակղզւոյն ծայրը Բոլայի նաւահան...

